ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՏԻՐԱՅՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻԿՅԱՆ

Նորապսակ Տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանը, ավազանի անունով Տիգրան, ծնվել է 1930 թվականի մայիսի 24-ին, Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում։ Իր նախնական կրթությունն ստացել է տեղի ազգային Սահակյան և Աբգարյան նախակրթարաններում։ Նախնական ուսումն ավարտելուց հետո, 1944 թվականին, նա ընդունվել է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Ժառանգավորաց վարժարանը, որտեղ սովորել է մինչև հայրենիք վերադառնալը։

1947 թվականին նա եկել է Հայաստան և իր ծնողների հետ միասին հաստատվել Երևանում։ Նույն տարին ընդունվել է Երևանի օտար լեզուների ինստիտուտի անգլիական բաժնում և սովորել մի քանի ամիս։ Սակայն, իր ծնողների ցանկությունն է եղել, որ իրենց որդին ստանա հոգևոր կրթություն, ուստի և նա թողել է ինստիտուտը, դիմել Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, որտեղ և ընդունվել է ու սովորել։

1952 թվականին փայլուն հաջողությամբ ավարտելով Հոգևոր Ճեմարանի լսարանական բաժինը, սարկավագ է ձեռնադրվում և նշանակվում քարտուղար Հոգևոր Ճեմարանի։

1955 թվականի ապրիլին, Ծաղկազարդի օրը, Ս. Հռիփսիմեի տաճարում, կուսակրոն քահանա է ձեռնադրվում գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի ձեռքով, վերանվանվելով Տ. Տիրայր աբեղա։

Նույն տարվա վերջերին նշանակվում է Բաքվի հայոց հոգևոր հովիվ և թեմական խորհրդի անդամ-քարտուղար։

1956 թվականի հոկտեմբերին, Մայր Տաճարում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետից ստանում է մասնավոր վարդապետական իշխանություն։

1957 թվականին նշանակվում է առաջնորդական տեղապահ Բաքվի հայոց թեմի։

1958 թվականին, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, զատկական տոների առթիվ հովվական այցելության է մեկնում Ռումինիայի ու Բուլղարիայի թեմերը։

1958 թվականի աշնան ընտրվում է Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ, ուր պաշտոնավարում է երկու տարի, ուշադրության արժանի բարեջանությամբ։

1960 թվականին ընտրվում է Բուլղարիայի և Ռումինիայի հայոց թեմերի առաջնորդ, պաշտոններ, որոնք վարում է ցարդ նվիրումով և արդյունավետությամբ, համերաշխ համագործակցությամբ թեմերի պատկառելի թեմական խորհուրդների։

1964 թվականի հոկտեմբերին պարգևատրվում է «Ռումինական Հանրապետության աստղ» շքանշանի 4-րդ աստիճանով։

1964 թվականի նոյեմբերի 29-ին, Մայր Տաճարում, եպիսկոպոս է ձեռնադրվում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ձեռքով, Գերագույն Հոգևոր Խորհրդի միջնորդությամբ և Ռումինիայի ու Բուլղարիայի հայոց թեմական խորհուրդների գրավոր ընծայության թղթերի հիման վրա։

Նորապսակ Տ. Տիրայր եպիսկոպոսը գտնըվում է իր ուժերի և շնորհների ծաղկման շրջանում։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է Տ. Տիրայր եպիսկոպոսին և վստահություն է հայտնում, որ նորապսակ սրբազանը, իր ապագա եռանդուն ու անձնվեր պաշտոնավարությամբ, միշտ կվայելի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր գնահատությունը և իր թեմերի հավատացյալ ժողովրդի վստահությունն ու հարգանքը։

ՀԱՅԿ ԴՊՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2 ՄՅԱԼԴԵՄՊԼԱ